| | |
|---|---|
| ՊԱՇՏՈՆ | Կորպորատիվ բիզնեսի վարկային ռիսկերի գնահատման բաժնի առաջատար / գլխավոր մասնագետ |
| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ | Լրիվ դրույք |
| ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ | ք. Երևան, ՀՀ |
| ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ | Հնարավորինս շուտ |
| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ | 08/05/2024թ. |
| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ | 17/05/2024թ. |
| ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ | Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով |

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա Բանկին որպես Կորպորատիվ բիզնեսի վարկային ռիսկերի գնահատման բաժնի առաջատար / գլխավոր մասնագետ:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ստացված կորպորատիվ վարկային հայտերի ամբողջականության ստուգում, անհրաժեշտության դեպքում ներկայացում լրամշակման,
- Կորպորատիվ վարկային հայտերի ուսումնասիրության համար հաճախորդի մոտ այցելություն՝ ըստ անհրաժեշտության,
- Ներկայացված ֆինանսական վերլուծության և վերջինիս հիմքերի ուսումնասիրություն,
- Կորպորատիվ հաճախորդների վարկանիշի հաշվարկում և վերահաստատում՝ համաձայն Բանկում գործող ներքին իրավական ակտերի,
- Կարծիքի/հաշվետվության կազմում, քննարկում անմիջական/ֆունկցիոնալ ղեկավար(ներ)ի հետ և ներկայացում համապատասխան կոմիտեի նիստին՝ ըստ անհրաժեշտության,
- Մասնակցություն բաժնի կողմից կազմվող ընթացակարգերի և կարգերի կազմման գործընթացին, առաջարկների ներկայացում,
- Կորպորատիվ վարկային հայտերի վերաբերյալ շաբաթական հաշվետվության կազմում և վերլուծություն,
- Ներդրվող նոր վարկային պրոդուկտների ռիսկայնության հնարավոր մակարդակների ուսումնասիրություն, հավանական ռիսկայնության մակարդակների սահմանում և տրամադրում շահագրգիռ ստորաբաժանումներին:

## ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Նվազագույնը 2-3 տարվա աշխատանքային փորձ բանկային ոլորտում
- Բանկային գործունեության, բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն,
- Բանկային օրենսդրության իմացություն
- Վերլուծություններ և հետազոտություններ իրականացնելու հմտություններ
- Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն
- Հաղորդակցման հմտություններ
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացում

- Ժամանակի արդյունավետ կառավարում
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Փորձով և գիտելիքով կիսվելու հմտություն նոր աշխատակցի մենթոր լինելու համար
- Վերլուծական հմտություններ
- Արագ և արդյունավետ որոշումներ կայացնելու ունակություն
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

## ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/45 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ անվանումով:
«ԱյԴի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորարար Բանկ՝ ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ https://www.idbank.am/: